«Ընդլայնված համագործակցություն Արևելյան գործընկերության անդամ պետությունների և Ռուսաստանի քաղհասարակությունների հետ»

«Արևելյան գործընկերության անդամ պետությունների և Ռուսաստանի քաղաքացիական հասարակությունների հետ ընդլայնված համագործակցություն» ծրագիրը (ÖPR-Programm) 2014 թվականից ի վեր հասարակական կազմակերպություններին խրախուսում է գործել որպես ժողովրդավարական դերակատարներ և ակտիվորեն մասնակցել ծրագրի մասնակից երկրներում ընթացող փոխակերպման գործընթացներին։

Մեր անմիջական հարևանությամբ, այդպիսով նաև Եվրամիության և Գերմանիայի ներսում ազատություն, անվտանգություն և բարեկեցություն ապահովելու համար Դաշնային կառավարությունը ÖPR-ծրագրի շրջանակում աջակցում է այնպիսի նախաձեռնությունների, **որոնք քաղհասարակական համագործակցության կայուն համակարգեր կստեղծեն կամ կզարգացնեն մի կողմից Գերմանիայի, մյուս կողմից Արևելյան գործընկերության անդամ պետությունների (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա), ինչպես նաև Ռուսաստանի ժողովրդավարական, ոչ պետական դերակատարների միջև։**

Ծրագիրը ենթադրում է Գերմանիայի և մասնակից երկրների գործընկերների միջև երկարաժամկետ համագործակցությունների ստեղծում՝ հավասարը հավասարի հետ հարաբերվելու և առաջադրանքներն առանց սեռային խտրության բաշխելու սկզբունքներով։ Ծրագիրն ընդգրկում է մշակութային և կրթական քաղաքականությանը վերաբերող նախագծային աշխատանքների ողջ տարողունակությունը։

Միջազգային իրավունքի խախտմամբ Ուկրաինայի դեմ Ռուսաստանի սանձազերծած հարձակողական պատերազմի հինգերորդ տարում և տարածաշրջանի մեծ մասում քաղհասարակության դերակատարների և կառույցների համար գնալով նեղացող տարածքների/հնարավորությունների առումով վերջիններիս ցուցաբերվող աջակցությունը շարունակում է առավել քան կարևոր մնալ։

1.*Բազմակարծության և դիմակայունության ամրապնդում՝* ի նպաստ խոսքի և լրատվամիջոցների ազատության, ինչպես նաև օտարերկրյա տեղեկատվական մտաշահարկման և միջամտության (FIMI/OSUՄ) դեմ պայքարի

Բազմակարծությունը ժամանակակից ժողովրդավարությունների հիմնարար բաղադրիչն է, որի օրինականությունն առաջին հերթին նաև բխում է հասարակության մեջ առկա կարծիքների, շահերի, արժեքային պատկերացումների բազմազանության հանդեպ հանդուրժողականությունից:

ÖPR-Programm-ի շրջանակում կխրախուսվեն այնպիսի նախագծեր, որոնք կնպաստեն տեղեկատվության, կարծիքների և լրատվամիջոցների բազմազանությանը, FIMI/OSUՄ դեմ պայքարին, կբարձրացնեն այդ խնդիրների հանդեպ դիմակայունությունը ծրագրի մասնակից երկրներում:

Նախագծերը մեդիադերակատարների զորացման և որակավորման միջոցով պետք է նպաստեն անվստահելի և կեղծ տեղեկատվության հանդեպ հանրության դիմակայունությանը, ինչպես նաև ապահովեն ավելի արդյունավետ հասանելիություն որակյալ ու բազմակարծիք (տեղական) լրատվությանը: Այդ առումով կարող են աջակցության արժանանալ նաև այնպիսի նախաձեռնություններ, որոնք միտված լինեն թվային պաշտպանական տեխնոլոգիաների զարգացմանն ու կիրառմանը:

2. Արժեքների և մարդու իրավունքների վերաբերյալ խոսույթների խթանում՝ հանուն փոխըմբռնման

Այս նպատակով աջակցություն կարող են ստանալ հատկապես փոխանակման և մշակութային նախագծերը: Կազմակերպվող հանդիպումները պետք է հնարավորություն տան անդրադառնալու հիմնարար արժեքներին՝ մարդու իրավունքների պաշտպանությանը, օրինական կառավարմանը, դատարանների անկախությանը, անձի կյանքի և ազատ զարգացման իրավունքին, մեծամասնության սկզբունքով որոշումներ կայացնելու սկզբունքին: Այս արժեքների համար միասնական պայքարը կխթանի փոխըմբռնումը ԱրլԳ տարածաշրջանում, կնպաստի այս երկրների վերաբերյալ շահավետ ընկալմանը Գերմանիայում: Խրախուսման արժանի են համարվում այն նախագծերը, որոնք քաղհասարակական շփումների կամ մշակութային նախաձեռնությունների միջոցով ուսուցանում, տարածում, ամրապնդում են վերոնշյալ հիմնարար արժեքները, ինչպես նաև նպաստում քաղհասարակությունների միջև կապերի հաստատմանը գործընկեր պետություններում և եվրոպական ինտեգրացիայի և համագործակցության համատեքստում:

3.Ստեղծել ապագայի հեռանկարներ և աջակցել ժողովրդավարական փոխակերպմանը՝ ի նպաստ ժողովրդավարության ամրապնդման, կոռուպցիայի դեմ պայքարի և ԵՄ մերձեցման

Այս նպատակն իրագործելու համար աջակցություն կարող են ստանալ այն նախաձեռնությունները, որոնք խթանում են ժողովրդավարական ջանքերը՝ ի

նպաստ համընդհանուր անվտանգ հասարակական հեռանկարների: Մասնավորապես Ուկրաինայում մեզ համար առաջնային են բարեփոխումների և տրանսֆորմացիոն գործընթացներին ցուցաբերվող աջակցությունը նաև ԵՄ ինտեգրացիայի առումով, ինչպես նաև այն քաղհասարակական կառույցների պահպանումն ու զարգացումը, որոնք տուժել կամ ավերվել են Ռուսաստանի հարձակողական պատերազմի հետևանքով:

Բացի այդ՝ մենք աջակցում ենք այնպիսի նախագծերի, որոնք խրախուսում են Ուկրաինայի և Մոլդովայի Հանրապետության՝ ԵՄ անդամակցության գործընթացը, Վրաստանի ԵՄ հեռանկարը, ինչպես նաև Հայաստանի՝ ԵՄ մերձեցումը: Ռուսաստանում և Բելառուսում մենք մեր աջակցությունը կենտրոնացնում ենք քաղհասարակության այն սեգմենտների վրա, որոնք, չնայած աճող բռնաճնշումներին կամ տարագրության մեջ գործելու հարկադրանքին, դեռևս կարող են իրենց ուժերով փոփոխություններ բերել իրենց երկրներում և, օրինակ, հանդես գալ հանուն հիմնարար իրավունքների իրացման: Աջակցության արժանի են նաև ակադեմիական, մասնագիտական և հասարակական-քաղաքական ոլորտների այն կրթական կամ վերապատրաստման միջոցառումները, որոնք կարող են նպաստել մարդկանց հասարակական գործունեության աշխուժացմանը, հնարավորություն տալ հատկապես մարգինալացված խմբերին մասնակցություն ունենալու քաղաքական և հասարակական գործընթացներին: Սա ներառում է նաև աջակցություն հասարակական առումով ակտիվ այն անձանց և գործընկերներին, որոնք պատերազմի, հետապնդումների, բռնաճնշումների կամ այլ դժվարին պայմանների պատճառով հայտնվել են առանձնապես բարդ վիճակում:

4.Աջակցություն երկխոսությանը և մերձեցմանը. փոխվստահության ամրապնդման միջոցառումներ՝ ի նպաստ տարածաշրջանային հակամարտությունների հեռանկարային հաղթահարման

Աջակցության կարող են արժանանալ մշակութային և կրթական այն միջոցառումները, որոնք կարող են ազդել չլուծված հակամարտություններում ճգնաժամերի կանխարգելման կամ հաղթահարման վրա՝ նպաստելով, որ հիմքեր դրվեն ժողովուրդների բարեկամության համար: Այս կատեգորիան հասցեագրված է հատկապես հարավկովկասյան երկրներին (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան), ինչպես նաև Մոլդովայի Հանրապետությանը:
Ողջունելի կլինեն այն նախագծային առաջարկները, որոնք ուշադրության կառնեն **Սևծովյան համագործակցության** անդամ պետությունների սահմանանց տարածաշրջանային հեռանկարները՝ սիներգիաներ ստեղծելով ԵՄ սևծովյան ռազմավարության համար:

Բացի այդ՝ Ռուսաստանի հարձակողական պատերազմի հետևանքով կամ պետական բռնաճնշումների պատճառով իրենց հայրենիքից դուրս են եկել նաև շատ ուկրաինացիներ, ռուսներ և բելառուսներ՝ հաստատվելով ԱրլԳ անդամ

այլ պետություններում, քանի որ իրենց համոզումների համար ենթարկվում են սպառնալիքների և ճնշումների: Աջակցության համար կդիտարկվեն նաև այն նախագծերը, որոնք կխթանեն այս մարդկանց միջև երկխոսությունը և հասարակական կյանքին նրանց մասնակցությունը, կամրապնդեն նրանց փոխկապակցվածությունը իրենց նոր հայրենիքի քաղհասարակության հետ և այդպիսով կնպաստեն դիմակայուն, ներառական և ժողովրդավարական հասարակության զարգացմանը:

<u>2027 թվականի աջակցության մեջ</u> ներառված են նաև հետևյալ կետերը՝ ըստ երկրների.

Հայաստան/Ադրբեջան. նախագծային առաջարկներ, որոնք սահմանանց սկզբունքով միտված կլինեն հաշտեցման գործընթացի խթանմանը (քաղ)-հասարակական մակարդակում

Հայաստան. նախագծային առաջարկներ, որոնք միտված կլինեն Հայաստանի՝ ԵՄ շարունակական մերձեցմանը

Բելառուս. աջակցություն տարագրության մեջ գտնվող անկախ մամուլին, ինչպես նաև բելառուսերենի և բելառուսական մշակույթի ինքնուրույնությանը

Վրաստան. նախագծային առաջարկներ՝ հաջակցություն բազմակարծիք և դիմակայուն քաղհասարակության և մեդիադաշտի, ինչպես նաև ապատեղեկատվության դեմ պայքարի

Ուկրաինա. նախագծային առաջարկներ, որոնք կնպաստեն 2027/2028թթ. գերմանա-ուկրաինական մշակութային սեզոնի նպատակների իրագործմանը:

<u>Ֆորմալ նախապայմաններ (հավելյալ տեղեկություններ կարող եք քաղել FAQ-ից).</u>

Քաղհասարակական նախագծերը կարող են աջակցություն ստանալ, եթե իրականացվում են **Գերմանիայում, Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում, Ուկրաինայում կամ Ռուսաստանում** և ներառում են առնվազն երկու կազմակերպություն (որոնցից մեկը՝ Գերմանիայում և առնվազն մեկը՝ թիրախային երկրներից): «Վայմարյան եռանկյունի» համագործակցության» շրջանակում մեծապես ողջունելի է **ֆրանսիական** կամ **լեհական** որևէ գործընկեր կազմակերպության լրացուցիչ մասնակցությունը: Աջակցություն կարող են ստանալ նաև տարածաշրջանում կամ Գերմանիայում ժամանակավոր տարագրության մեջ գտնվող նախագծերը, որոնք ունեն գործընկեր կազմակերպություններ:

Աջակցության ենթակա են միմիայն <u>քաղհասարակական</u> նախագծերը և կառույցները, և ոչ՝ պետական կամ տնտեսական դերակատարները:

Աջակցության միջոցները ծրագրային միջոցներ են, որոնք սահմանվում են տարեկան բյուջեի սկզբունքով: Ուստի, սկզբունքորեն, նախագծերը պետք է իրականացվեն 2027 թվականին և ավարտվեն 2027 թվականի դեկտեմբերի 31-ին: ԳԴՀ արտգործնախարարությունը կարող է արտոնել նաև առավելագույնը մինչև 3 տարի տևողությամբ նախագծեր, եթե ներկայացվի մանրամասն և ծանրակշիռ հիմնավորում:

Մեկ նախագծի աջակցության նվազագույն գումարը կազմում է մոտավորապես 50.000 եվրո: Նախագծի համար անհրաժեշտ անվտանգության միջոցառումների ծախսերը սկզբունքորեն նույնպես կարող են ֆինանսավորվել: Նախագծերի էսքիզները (գերմաներեն և անգլերեն) կարող են ներկայացվել բացառապես

<u>http://oper.diplo.de</u> կայքով

<u>2026 թվականի օգոստոսի 7-ից մինչև սեպտեմբերի 15-ը</u>:

Այս կայքում հավելյալ <u>տեղեկություններ և ցուցումներ</u> կգտնեք նախագծային գաղափարներ ներկայացնելու վերաբերյալ: Արդեն ներկայացված նախագծերի մեջ հնարավոր չէ փոփոխություններ անել կամ վերջնաժամկետից հետո հավելյալ թղթեր ուղարկել:

Հատկացումն ընդունող կողմերը պարտավոր են ներկայացնել հատկացման օգտագործման պատշաճ ապացույցներ և նախագծի վերաբերյալ զեկույցներ: Դրանք անհրաժեշտ են Արտաքին գործերի դաշնային գերատեսչությանը և Դաշնային արտգործնախարարությանը՝ նախագծերի և աջակցային ծրագրի միջոցների ճիշտ օգտագործումը և արդյունավետությունը համապարփակ ստուգելու համար: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել ներբեռնումների «Ընդհանուր և հատուկ կողմնակի դրույթներ» բաժնում, ինչպես նաև դիմումի վերաբերյալ որոշման շրջանակում:

Նախքան հարցեր ուղարկելը խնդրում ենք ուսումնասիրել «Հաճախ տրվող հարցեր» բաժինը: Եթե Ձեր հարցն այնտեղ պարզաբանված չէ, Ձեզ հաճույքով կպատասխանի ԳԴՀ արտաքին գործերի դաշնային գերատեսչության իրավասու թիմը և անհրաժեշտության դեպքում Ձեզ կուղղորդի դիմել ԳԴՀ արտգործնախարարության համապատասխան աշխատակցին: Խնդրում ենք գրել այս էլ. հասցեին՝ oepr@bfaa.bund.de :

http://oper.diplo.de կայքից օգտվելու ժամանակ **տեխնիկական դժվարությունների** հանդիպելիս կարող եք դիմել տիկին Յուլյա Մելթկեին (f-pf-1-1-8@bfaa.bund.de) և տիկին Յանետ Շտեֆանիակին (f-pf-1-1-5@bfaa.bund.de):